

մէկ բառ իսկ չունի: Այս հանգամանքը ինքնին ցոյց կու տայ, թէ անիկա բնաւ կրօնական առաքելութեամբ կամ հովուական պաշտօնով չէ, որ գացած է Հապէշխատան:

Նոյնիսկ կարելի է ենթադրել, թէ Յովհաննէս արքեպս. Թիւթիւնճի ինքզինքը ծածկած է և Հայոց հետ յարաբերութիւն չէ մշակած:

Բայց անշուշտ առանց պատճառի ալ չէր, որ հայ արքեպիսկոպոսը այսքան դժուարամերձ ու գրեթէ առասպելական երկիր մը այցելելու փափաքը ունեցած էր:

Արդեօք տեղ տեսնելու հետաքրքրութիւնն է, որ մղած էր երթալու Հապէշխատան: Կարելի է այս մասին խորհիլ քիչ մը:

Արդարև, եղած են և կան մարդիկ, որոնք մեծ հետաքրքրութիւն ունին տեղ տեսնելու և երբեք տախթը չեն փախցնեն տեղէ տեղ ճամբորդելու:

Արդարև, Յովհաննէս Թրւթիւնճիէն առաջ ունեցած ենք ուղեգիրներ, որոնք հետաքրքրութենէ մղուած հեռաւոր աշխարհներ գացած են և գիրի առած են իրենց տեսածները: Այսպէս՝ ծանօթ է Հեթում կոստիկոսցի, որ դէպի Թաթարաց աշխարհ իր արկածալից ճամբորդութիւնը նկարագրած է:

Ունինք դարձեալ Խաչատուր Եւզոկիացի մը, որ տաղաչափուած ձեւով գիրի առած է իր ճամբորդութեան պատմութիւնը (տես Բազմալիկ, 1847 կամ Աճառիս, 1903):

Իսկ շատ հետաքրքրական նմոյշ մը տուած է Մարտիրոս Երզնկացի եպիսկոպոս «Ի Ս. Կիրակոսու յանապատէն ի Նոր Գեղայ գեղէն», որ 1480 Հոկտ. 29ին ճամբայ ելած է իր վանքէն և տասը տարի յետոյ Պոլիսէն անցնելով 1490 Հոկտ. 1ին հասած Վենետիկյ